ԳԱԻԱԹ
ՄԸ
ԹԷՑ



ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹԻՒՆ

ՄԷԿ ԱՐԱՐ

Հայացուց
ՄԻՀՐԴԱՏ Մ. ՀԱՑԱՌԱՋՆ
Դերասան եւ Ցուցարար

Հրատարակիչ՝ ՅԱԿՈԲ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ
Պատրաստ Գալի, Ռէօթս էճ. խան

Ա. ՊՈՍԼԻՍ
Տպագր. «ԹԷՍԱԼՈՆԻԿԻ»
1930

ԹԱՏԵՐԳՈՒԹԻՒՆՆԵՐ

		Ղրշ.
Ակնցի Հաճի Աղան	Ց. Ց. Ամիրեանց	40
Արչին Մալ Ալան		15
» » » Հայատառ Թուրքերէն		25
Անուշ		25
Անձնուէր Ընկերը		50
Լէպլէպլէճի		30
Շատախօս Սափրիչը		15
Ասիացի Սափրիչը	Ց Պապէսեան	10
Ամերիկանայ Փեսացուն կամ Տայը Կարապետ		25
Բարեկենդանի Անկուտիները		15
Դղումի Վաճառականը		15
Երանոս Աղբար	Տ. Փափազեան	25
Երկու Խուլեր	Մոլիէր	15
Թիք Թաք		10
Կրլ Սքաութ կամ Մատս Մէջն է	Ե. Թօլաեան	50
Մարիամ Մագթաղենացի	Լ. Ծիծաղ	50
Սատանայ		10
Սիբլօբ		10
Գողը	Տ. Միրբօ	15
Հնարամիտ Վարձակալը		10
48 Օխտոց գլխու փորձանքը		20
Վիրի ճաշարանին սպասաւորը		15
Գորգարանին Երկրաչափը		15

Ց. ԱԲՐԱՀԱՄԵԱՆ Գրատունը կը հայթայթէ Դրպրոցական, Վիպական, Թատերական, Պատմական, Բանաստեղծական ամէն տեսակ Հայերէն գիրքեր եւ այլն, եւ այլն։

Հասցէ՝

ՅԱԿՈԲ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ

Կ. Պոլիս, Պապը Ալի, Ըէչիա էֆ. խան

ԳԻՆ 15 ՂՐՇ

8-7

ԳԱՒԱԹ ՄԸ ԹԷՅ



ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹԻՒՆ ՄԷԿ ԱՐԱՐ

A II/2962



Հայացուց
ՄԻՀՐԴԱՏ Մ. ՀԱՑԿԱՆՋՆ
Դերասան եւ Յուշարար

Հրատարակիչ՝ ՅԱԿՈԲ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ
Պապը Պլի, Ռէօիս էֆ. խան

Կ. ՊՈԼԻՍ
Տպագր. «ԹԷՍԱԼԻԱԹ»
1938

ՀԱՅԿ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ № 2
ԱԿԱԴԵՄԻԱ
ԳԵՐԳԷՐՅԱՆ ՀՐԱՄ
HARRY G. ERGER
857 WASHINGTON

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

Գօնք Արման.
Գօնքէս Գարոլին.
Էքիէն լրագրավանատ
Ֆրէտրիք ծառայ

ԱՐԱՐ Ա.

(Կահաւորուած սրահ մը, խորը մէջտեղը դուռ մը, սրահին երկու կողմը մէյ մէկ սենեակ հովքնցի դրուած (բանաբէ) աթոռներ եւ այլն...

ՏԵՍԻԼ Ա.

Ծրէտէրիք, (առանձին) *լրագիր կարդալու զբաղած.*

ԾՐԷՏ.— (զանգակի ձայն) *Էօ՞ֆ. այստեղ ալ վայրկեան մը հանգիստ չեն թողուր քեզ. արդեօք ո՞վ է եկողը.* (պատուհանէն նայելով) *Օ:... միւսիւ Գոնթը և գոնթէսը ճաշերնին ըրին, պտոյտ մը ընենք ըսելով դացին, հիմա ալ վերադարձան. ասանկ չպիտի ըլլայ. երթալու խոհանոցը կարդալու է լրագիրը,* (կ'երթայ):

ՏԵՍԻԼ Բ.

ԱՐՄԱՆ, ԳԱՐՕԼԻՆ.

ԱՐՄ.— (թեւ թեւի մտնելով) *Վերջապէս տիկին աղքատաց ի նպաստ տրուելիք այս պարահանդէսին հրաւէրը չէի կրնար մերժել։*

ԳԱՐՕԼ.— *Այսպիսի բարենպատակ գործէ մը ետ մնալնիդ չեմ փափաքիր.*

ԱՐՄ.— *Բայց, միասին չի գալնուդ պատճառը չեմ կարող հասկնալ։*

ԳԱՐՕՀ.— (ինքնիրեն) կ'երեւայ թէ. մինակ երթալ կը փափաքի։

ԱՐՄ.— Ինչո՞ւ լռեցիք։

ԳԱՐՕ.— Մինակ երթալ կ'ուզէք, որպէսզի դեղեցիկ կանանց հետ, վալս, գատրիլ և այլն պարէք։

ԱՐՄ.— Նախանձոտ քեզի։

ԳԱՐ.— Ե՞ս նախանձոտ ըլլամ, քաւ լիցի. մեր ամուսնութեան առաջին օրը միթէ իրարու չի խոստացանք չի նախանձելու համար, չեմ նախանձիր, պարտանդէս գացէք, պարեցէք զուարճացէք, բայց և այնպէս Ձեր սիրոյն արժանի ամուսին մը ունենալնիդ մտքէ մի հանէք։

ԱՐՄ.— (ձեռքը բռնելով) ուրեմն, ցաւսութիւն իմ հաւատարիմ ընկերուհիս.

ԳԱՐՕ.— (ձեռքը չի ձգելով) երթաք բարով անձնուէր ընկերս։

ԱՐՄ.— Ուրիշ ըսելիք մը ունիք...

ԳԱՐ.— Ո՛չ...

ԱՐՄ.— Այլեւս պէտք է մեկնիմ. բայց դուք մինակ մնալով պիտի նեղանաք.

ԳԱՐ.— Մինչև Ձեր վերադարձը ստիպեալ եմ անքուն մնալ և սպասել։

ԱՐՄ.— Ձեռքերս կապուած ինչպէս կրնամ երթալ։

ԳԱՐ.— Ա՜յ... ձեռքերդ. (ձգելով) անաւասիկ ազատեցաք, հիմա կարող ես ազատ ես երթալ...

ԱՐԱ.— Մնաք բարով, սիրելիս (կամաց կամաց կ'երթայ)

ԳԱՐ.— Վերջապէս կ'երթաք...

ԱՐՄ.— (կենալով) երթալս չէք ուզեր.

ԳԱՐ.— Նախանձիլ կ'սկսիմ կոր...

ԱՐՄ.— Է՜յ... վերջապէս...

ԳԱՐ.— Վերջապէս կը խոստովանիմ թէ նախանձոտ եմ, գայէք սիրելիս գայէք.

ԱՐՄ.— Դարձեալ մնաք բարով.

ԳԱՐ.— Ժամը քանիի՞ պիտի վերադառնաք.

ԱՐՄ.— Պարահանդէսին վերջանալուն։

ԳԱՐ.— Ես ալ մինչեւ առաւօտ պիտի ստիպուիմ սպասել։

ԱՐՄ.— Ո՛չ... կէս գիշերին կուգամ։

ԳԱՐ.— Ժամը 12ին...

ԱՐՄ.— (Ժամացոյցը նայելով) Հիմա ժամը ինն է. ըսելէ երեք ժամէն կը վերադառնամ.

ԳԱՐ.— Շատ աղէկ։

ԱՐՄ.— Մնաք բարով իմ ամէնահաւատարիմ ընկերուհիս.

ԳԱՐ.— Երթաք բարով նախանձոտ ամուսինս։

ԱՐՄ.— (Ինքնիրեն) Վերջապէս երթալս չուզեր կոր. շուտ մը վերադառնալու է։ (Կերթայ)։

ՏԵՍԻԼ Գ.

ԳԱՐՕՂԻՆ (առանձին). (վերջը) ՖՐԷՏԷՐԻՔ

ԳԱՐ.— Գնաց. հոս գիս մինակ ձգեց...ինծի միասին չի տանիլը իր նախանձէն առաջ կ'ուգայ, իմ ուրիշի մը հետ պարելս չուզելուն համար է, անանկ է եա, բնաւ երբեք ուրիշ պատճառ մը չիկայ. նախանձոտ է՛, պապամ, նախանձոտ. իբր թէ իմ նախանձոտ ըլլալս պիտի բռնէ. ես ալ անկէ առաջ վարպետութիւն մը մտածեմ թող ան ալ տեսնայ. կեցիր սիրելի ամուսինս կեցիր միւսիւ դօնթ. ես ալ քեզի անանկ խաղ մը խաղամ որ դուն ալ տեսնիր, պզտիկ խաղ մը, անանկ որ տեսնելու ըլլայ նէ, բարկութենէն կատղի, քիչ մը սենեակս քաշուիմ և հնարք մը

խորհիմ, արդեօք որչափ թօնաֆ բան պիտի ըլլայ... ծառան կանչեմ... Ֆրէտէրիք, Ֆրէտէրիք.

ՏԵՍԻԼ Դ.

ԳԱՐՕԼԻՆ, ՖՐԷՏԷՐԻՔ.

ՖՐԷՏ.— (մտնելով) մատամ գօնթէս։

ԳԱՐ.— Միւսիւ գօնթին դալը ինձի իմացնելու համար անհնակիս դուռը երեք անգամ զարկ. այս տեղերն ալ քիչ մը ժողվէ մաքրէ... (կ'երթայ)

ՖՐԷՏ.— Գօնթին դալը, գօնթէսին իմացնել դիւրին, դիւրին ա՛նմա. իմանանք նէ. հապա չիմանանք նէ, աս քիզի յանդիմանութիւն մը, ճարը չիկայ քնանալ չ'ըլլար, բայց սա չի հասկցայ որ ինչու համար մեր միւսին մինակը պարանոցէս գնաց արդեօք մէջերնուն սև կատու անցաւ է՞... ինչուս պէտք, ես իմ գործիս նայիմ. երթամ առաւօտեան թէյի ամանները. մաքրեմ պատրաստեմ, (կ'երթայ)

ՏԵՍԻԼ Ե.

ԷԹԻԷՆ (առանձին)

ԷԹԻԷՆ.— (ձեռքը լրագիրներ ներս կը մտնէ) կառք հասնելս գիտեմ կոր. Հոս դալս ալ կը հասկնամ, բայց ինչու համար զիս հոս բերին, ահա՛, այն ապուշ մարդը. (հերիֆը) ի՞նչ ըսելով զիս հոս բերաւ ես հոս ի՞ չ գործ ունիմ. հա՛, երթալու հարցնեմ թէ... ա՜ղէկ ամմա մարդը ո՞ւր գտնելու է. զարմանալին սա է թէ հոստեղ մարդ մարդասանք. չիկայ. միայւ ընող կատու մը մինչեւ իսկ չիկայ... արդեօք անմարդաբնակ է... հա՛ կեցիր սրտեղ դուռ մը կայ (խառնելով) ա՜յ, գոց է... Աստուած տար տէ սխալ դուռ

զարկած չըլլայինք. (անդիի կողմը երթալով առ քեզի դուռ մը տահա... (կը բացուի) օ՛ հօ՛... ամմա տա երկար սալոն հա, սըվոր մինչեւ անդիի ծայրը երթամ կարելի է մէկը դէմս կ՚ելլէ տէ փողոցին դրան ո՞ւր ըլլալը կը հասկնամ դուրս կ՚ելլեմ տէ լրագիրներս կը ծախեմ, հէյ երթանք նայինք, տահա հիչ (սիգտահ) չենք ըրած կ՚երթայ։

ՏԵՍԻԼ Զ.

ՅՐԻՏԷՐԻՒՐ (առանձին)

ՅՐԻՏ.— (մտնելով) ա՛յս ինչ է, մարդ չիկայ, հոս ոտքի ծայն լսեցի, խոհանոցին դուռը խառնչտըլլողը ո՞վ էր հապա... արդեօք միւսիւ գօնթէն էր՝ (պատուհան կը վազէ) ա՛ն ինչ է. ահա՛ միւսիւ գօնթը եկեր է. երթամ դուռը զարնեմ (կ՚երթայ երեք անգամ կը զարնէ) հէյ ժամանակին լուր տուինք (կ՚երթայ)

ՏԵՍԻԼ Է.

ԱՐՄԱՆ (առանձին)

ԱՐՄ.— Վերջապէս չը դիմանալով եկայ. չեմ գիտեր թէ անչնորհք կատապանս որ ատտանին ծակը մտեր էր, չի կրցի հասկնալ, ըսած էի որ կառքին դուռը բաց ձգէ որպէսզի կառք մտնելուս պէս սրարշաւ ճամբու հանեմ ձիերը... սա լեզու չի գիտցողը խօսք չի հասկցող. հէրիֆը վաղ առաւօտ ճամբեմ տէ թող ան ալ երթայ տէ սովրի. ես աչ ձեռքէն ազատիմ։ Զավալլը մեր տիկինը սպասելով սիրտը միայնակ նեղացած և դացած պառկած է, հիմա ինծի դէմ վշտացած է. անոր սիրտը շինելու համար մէկ ճար մը կայ. պարտէզ կ՚իջնեմ իր պատուհանին տակը իւր սիրած երգերէն կտոր մը կ՚երգեմ լսելուն պէս չի դիմանար և պարտէզ կ՚իջնէ և քովս կուգայ, ես ալ

շնորհակալութիւնս յայտնելով ներողութիւն կը խընդրեմ, ու այսպէսով կը հաշտուիք կը լմննայ կ'երթայ (կ'երթայ եւ ներսէն կ'երգէ)։

ՏԵՍԻԼ Ը.

ԳԱՐՕՂԻՆ. (վերջը) ԷԹԻԷՆ.

ԳԱՐՕՂ.— Երգողը կարծեմ թէ ամուսինս է, (պատուհանէն նայի) անաւասիկ կառքը. ի՞նչ շուտ վերադարձաւ. ի՞նչ գործ ունի պարտէզը.

ԷԹԻԷՆ.— (մտնելով ինքնիրեն) սա փողոցին դուռը մէյ մը գտնեմ, անմիջապէս (զամբիանոզ) որ կողմը երթալու ըլլամ այս սալօնը կ'ելլեմ կոր, ա՛յ... տիկին մը, փառք քեզ Աստուած. փառք քեզ տէր... հէլէ մէկը դէմերնիս ելաւ. ես ըսես նէ վարձու տուն կը կարծէի կոր, արդեօք փողոցին դռան որ կողմը ըլլա՝ հարցնեմ, մի՞.., կը հարցնեմ եա՛... ան չէ ամմա, դուն այս տան մէջ ի՞նչ գործ ունիս ըսելու ըլլայ նէ ի՞նչ պատասխան տալու է.

ԳԱՐ.— (դառնալով) ականջիս ձայն մը եկաւ (տեսնելով) ա՛յ... այս ով է, օգնութեան հասէք. օգնութեան. (աջէն ձախ ձախէն աջ կը վազէ).

ԷԹԻ.— Աման տիկին. կը բաւէ.

ԳԱՐ.— Գող կայ, գող կայ. հասէք օգնութեան.

ԷԹԻ.— Ո՛չ, ո՛չ մատմազէլ գող չիկայ ես գող չեմ։

ԳԱՐ.— Հապա դուք ո՞վ էք, ինչ կ'ուզէք.

ԷԹԻ.— Ճանըմ մի պօռար, ես, ես, բան մը չեմ ուզեր, բայց...

ԳԱՐ.— Բայց, ի՞նչ զրուցէ...

ԷԹԻ.— Մի պօռար, մի նեղուիր. սիրտդ հանգիստ բռնէ որպէսզի հասկցնեմ։

ԳԱՐ.— Շատ աղէկ, զուրցէ տեսնենք դու ո՞վ ես պատասխան տուր.

ԷԹԻԷՆ.— Ես բան, հը՛... լրագրավաճառ.

ԳԱՐ.— Ապուշին մէկը բլլալու է.

ԷԹԻ.— Ա՜հ, տիկին, օրիորդ, ինծի որ ծակէն հոս խօթելնին ժամերով փնտռեցի, բայց ոչ մի կերպով մտած ծակս չի դտայ, ծուղակը ինկած մուկի նման բռնուեցայ մնացի։

ԳԱՐ.— (ինքնիրեն) միտքս բան մը ինկաւ կարելի է այս ապուշը գործիս կուդայ (բարձր) ինծի նայէ։

ԷԹԻ.— Նայիմ տիկին, ուղածնուդ չափ նայիմ, բայց. (ծունկի գալով) այսպէս ծունկի եկած մի ոտքի վրայ մի նայիմ.

ԳԱՐ.— Ոտքի ել և ինծի մոտիկ ըրէ.

ԷԹԻ.— Ինչպէս որ կ՛ուզէք.

ԳԱՐ.— Պէտք է գիտնաս որ այս տանուտէրը ես եմ.

ԷԹԻ.— (ինքնիրեն) գօնթէս և կամ մարքիզ ըլլալու է.

ԳԱՐ.— Մի վախնար, եթէ աչքս մտնելու ըլլաս դոն կը մնաս.

ԷԹԻ.— (ինքնիրեն) կոկիկ շիք երևնալու է, հա՝ ձեռնոցներս հագնիմ. (ինքն գուլպաներ ձեռքը կ՛անցնէ:

ԳԱՐ.— Ինծի հնազանդելու ըլլաս նէ.

ԷԹԻ.— (ինքիրեն) պատռած ըլլալը մոռցեր էի.

ԳԱՐ.— Ամէն գնով պիտի վարձատրուիս։

ԷԹԻ.— (ինքնիրեն) անդիմնը ձեռքս անցնելու է, (բարձր) ինչ որ կը հրամայէք կը հնազանդիմ. սա բանթալոնիս պատռածը ո՞ւր պարտկեմ. գոնէ սա գուլպաները ազատս չըլլան.

ԳԱՐ.— Այս տունը ինչո՞ւ համար և ի՞նչպէս մտնելդ չիտակէ չիտակ պատմելու ըլլաս չի յուսացածէդ աւելի պիտի վարձատրուիս։

ԷԹԻ.— Ծատանիդ. մոտիկ ըրէք, տիկին ձեզի մանրամասնօրէն պատմեմ.

ԳԱՐ.— (նստելով) Ձեզի մոտիկ կ՛ընեմ.

ԷԹԻ. Զեմ գիտեր որ փողոցին որ անկիւնէն կ'անցնէի, մեծկակ տան մը վարի յարկը գտնուող սա-լօնը, կնիկ էրիկմարդ շատ մը անձինք տեսայ որ ի-րարու փաթթուած խենդ ու խելառ ցատկելով կը դառ-նային, հասկցայ որ պարահանդէս էր.

ԳԱՐ.— Շատ ապէկ, է՛յ վերջը.

ԷԹԻ.— Վերջը մի՞ (ինքնիրեն) սա ապուտ դուլ-պան խելքս գլխէս թռցուց.

ԳԱՐ.— Վերջը ի՞նչ եղաւ.

ԷԹԻ.— Ճամբան շարունակել սկսայ բայց աչքիս անանկ բան մը զարկաւ որ, կեցած տեղս քամուեցայ մնացի։

ԳԱՐ.— Տեսածդ ի՞նչ էր.

ԷԹԻ.— Պատուական փայլուն կառք մը, լապտեր-ները վառուած, կառապանն ալ մարակը ձեռքը առած ճամբայ ելլելու պատրաստ, ինքնիրենս ըսի, երանի թէ սա կառքին մէջ նստող մարդուն պէս երջանիկ ըլլայի, այս խորհրդածութիւնը ընելով կառքին կոմ-նակի բաց եղող դուռնէն ներս մտնելով անդիէն դուրս ելնելու փափաք մը ունեցայ. մէկ, երկու, երեք հօփ-լա ինքզինքս կառքէն ներս գտայ, բայց և այնպէս անդիի դուռն ալ դոց գտնելուս մտած ծակէս դուրս ելնել ուզեցի, մէյ մըն ալ ինչ տեսնեմ, կառապանը ձեռքը երկնցնելով դուռը գոցելով, ձեռքի մարակը շրաք շրաք, շառաչեցնելով, հաբ հաբ, ըսելով, ձիերը սկսան սրարշաւ վազել. ես ալ կառքին մէջ ոտքի վրայ մնացի. կառքը ըսես նէ թրնկբր մրնկբր դլոռ-ռելով կ'երթար ես ալ կառքին մէջ զանկբր զանկբր կը դողայի կառքին այն կրա...ռ...ռ... հանած ձայ-նէն, կարծես թէ երկինք կ'որոտայ, ամպերը կը փայ-տակեն, երկնքի կամարը գլխուս կը փլի կորսէ ես ալ տակը, պիտի էզմուիմ, վախէս երկու փարաի խել-քս պիտի թռցնէի, կառապանին պոռացի. մի կենար

մի երթար, մի քշեր ձիերը... մարդը չի լսեր...

Գ.Ա.Ր.— Ոտքի վրայ մնալուդ և չի նստելուդ պատճառը ի՞նչ էր.

Էթի.— Մեր գերձակը բանթալօնը նեղ ձեւելուն պատուէրն կը վախնայի բայց վերջապէս համբերութիւնս հատաւ կառապանին կը պօռամ, մի քշեր կեցիր, մի երթար. գործ չունիս նէ պօռաս, կանչէ, ալ ուժերս սպառեցան. կառքին ապակիներուն զարնել սկսայ, կառապանը բան նէ իմ չհասկցած մէկ լեզուով կը պատասխանէ, վատի կօմանտէր այքօն շուտի հօրս, ըսելով, ալ աւելի ձիերը մտրակել սկսաւ, ալ վերջաւոր թոչուններու պէս սուրալ սկսանք, է՛յ, ալ բարկութենէս մազերս մնկուեցան, գլուխս ուռեցաւ աչքերս խաւարեցան, ան դուրսէն, ես ներսէն, ես անոր անտառակ, սրիկայ, ապուշ. քու հէպ հէպիդ ալ դուն ալ քէոնին տակը անցնիս, մանդը, այսօթայ կօն մէրի, տիք տիք կօնհէյն, պէ մարդ կառքը կեցուր, կօնթ հէյ. արնէյն պա վատի կօնթ կիզմէթ, ալ լմնցայ քիչ մնայ պիտի նստէի, մէյ մըն ալ բանթալօնիս նեղ ըլլալը միտքս ինկաւ, մարդը դուրսէն դարձեալ, «փուսպիք հավուղ, է՛յ, քում թում», է՛յ ալ ծունկերս կթոտեցան (շարքաստ) նստեցայ, մէյ մըն ալ ճառի բանթալօնիս ծունկը չի պատռի մի՞... Հիմա ալ ուր ուզես նէ տար ըսի.

Գ.Ա.Ր.— Է՛յ վերջը ի՞նչ եղաւ.

Էթի.— Մէյ մալ պարտէզէ մը անցնելով դռան մը առջին կեցանք. կառապանը տեղէն ցատկելով գընաց կորսուեցաւ. դռնապանը կառքին դուռը բանալով, պարահանդէսէն այս քօսթիւմով վերադարձանք. ինչ որ է հրամմեցէք ըսելով թեւս մտաւ, սանդուխէ մը ինծի ներս հրեց. դուռները գոցեց գնաց. չորս կողմս նայեցայ բայց մութ ըլլալուն բան մը չի տեսայ, ուր գտնուիլս հասկնալու համար սանդուխներէն

վեր բարձրացայ մէկ քանի դուռներէ անցայ մէկ քանի սանդուխներէ իջայ ելայ, իջայ. վերջապէս փողոց ելնելու տեղ չը գտնելով, անտառին մէջ ճամբան մոլորող անկուտի ճամբորդի նման. շուարեցայ մնացի, հիմա դուք խօսեցէք տիկին. յանցանք մը ունիմ ես, գող չըլլալուս վստահ ըլլալու համար ամէն կողմս կրնաք աչքէ անցնել. (գրպանները դարձնէ) ահա՛ գրպաններուս ծակ ըլլալն ալ անկուտիութեանս նշան է։

ԳԱՐ.— Խօսքերնիդ ալ ձեզի պէս թօհաֆ է.

ԷԹԻ.— Թօհա՛ֆ, է՛հ, քիչ մը,(ինքնիրեն) կարծեմ թէ հոս մնալուս գոհ պիտի մնամ.

ԳԱՐ.— Պարոն, մինչեւ այս տարիքը գալերնիդ ո և է մէկը սիրեցիք... բայց չէք լսեր, սիրելի միւսիւ զոնթ.

ԷԹԻ.— Միւսիւ զոնթը ո՞վ է, հոս ինձմէ զատ մէկը չկայ.

ԳԱՐ. Աղէկ ա, ես ալ ձեզի կը զրուցեմ կոր.

ԷԹԻ.— Ինծի՞... ասոնք ի՞նչ ըսիք,

ԳԱՐ.— Այսինքն, աղջիկ մը, օրիորդ մը սիրեցիք.

ԷԹԻ.— (ինքնիրեն) Ի՞նչ ըսեմ արդեօք, (բարձր) այո՛, ո՛չ ո՛չ, պիտի ըսէի շուարեցայ, ո՛չ. տիկին. ոչ։

ԳԱՐ.— Սիրտերնիդ գրաւող աղջիկ մը գտնել չէք ուզեր.

ԷԹԻ.— Ո՛չ, տիկին ոչ.

ԳԱՐ.— Կարծեմ միտքս չի հասկցաք։

ԷԹԻ.— Այո, ո՛չ չի հասկցայ ո՛չ, հասկցայ, հասկցայ.

ԳԱՐ.— Հասկցաք, բայց պատասխան տալ չէք ուզեր, այնպէս չէ։

ԷԹԻ—. Ո՛չ, տիկին, ո՛չ։

ԳԱՐ. — Օ՛ պարոն.

ԷԹԻ.— Տիկին.

ԳԱՐ.— Խելքդ գլուխդ ժողվէ և գիս մտիկ ըրէ։

ԷԹԻ.— Ի՞նչպէս որ կ'ուզէք, տիկին հրամայեցէք։

ԳԱՐ.— (ինքնիրեն) դէշ չէ՛. սա ապուշը դործիս պիտի դայ (բարձր) նստեցէք պարոն։

ԷԹԻ.— Նստիմ մի։

ԳԱՐ.— Այո՛,

ԷԹԻ.— (ինքնիրեն) այնպէս կ'երևայ թէ աչքը մտանք։

ԳԱՐ.— Մօտեցէք, մօտս եկէք։

ԷԹԻ.— Մօտենամ մի.

ԳԱՐ.— Մօտեցիր, մօտեցիր, ինչու կը վախնաս առաջ չի դաք։

ԷԹԻ.— (եռ եռ երբալով) շատ աղէկ.

ԳԱՐ.— Այն կողմը չէ, այս կողմ, իմ կողմս, ինձի մօտեցիր.

ԷԹԻ.— Ձեր մօտը, շատ աղէկ, (երբալով) այսանուղ, ձեր մօտը։ (աթոռը առնելով աջոր մօտը կ'երթայ։

ԳԱՐ.— (հրելով) Է՛յ, քիթս պիտի մտնես... հիմա ինձ մտիկ ըրէ, ես ծառայ մը ունիմ որ գիս շատ կը սիրէ ես ալ ան կը սիրեմ։

ԷԹԻ.— Ծառանիդ մի՞...

ԳԱՐ.— Ես հարուստ մարդ չեմ փնտռեր, միայն թէ ինձի հաւատարիմ և սիրոյս արժանի. մէկը ըլլայ, հասկցա՞ր։

ԷԹԻ.— Այո՛, (ինքնիրեն) չհասկցայ.

ԳԱՐ.— Հիմա եթէ հոս գալու ըլլայ. այս կրակը որ սիրտս կ'այրէ. մարելու մէկ ճարը կը խորհիմ։

ԷԹԻ.— Սիրտերնիդ կ'այրի՞. եթէ կրակ ունիք. սառած ջուր խմեցէք։

ԳԱՐ.— Անանկը չէ։

ԷԹԻ.— Աւելի աղէկը կ'ուզէք, պաղ ջուրի պանես ըրէք. տուշ ըրէք տուշ։

ԳԱՐ.— Ի՞նչեր կը զուրցէք։

ԷԹԻ.— Եւ կամ բժիշկին յանձնարարութեան համաձայն, (տմիր ճիճտիով լեմօճաք խմեցէք)։ անմիջապէս կը բուժուիք։

ԳԱՐ.— Ինծի մտիկ ըրէ։

ԷԹԻ.— Մտիկ ընեմ տիկին... Օ՜հ օրիորդ։

ԳԱՐ.— Ի՞նչ որ հրամայեմ, եթէ հնազանդիս, քեզ պիտի սիրեմ։

ԷԹԻ.— Ամա՛ն տիկին, ի՞նչեր կը զրուցէք կոր։

ԳԱՐ.— (զանգակը կը զարնէ ծառան կը մտնէ) պարոնին գաւաթ մը թէյ։

ՖՐԻՑ.— Գլխուս վրայ տիկին գօնթէս։ (ինքնիրեն) այս ո՞վ է, ինչպէս պարոն է, կապիկի կը նմանի։ (կ'երթայ)

ԷԹԻ.— (ետեւէն քանի մը քայլ առնելով) քիչ մը ալ բէ.քսիմէթ բեր։

ԳԱՐ.— Հիմա եկուր, սա ձեռքս համբուրէ...

ԷԹԻ.— Ա՞ՀԸ, թէ ձախը...

ԳԱՐ.— Որը որ կ'ուզես։

ԷԹԻ.— Ես երկուքն ալ կը համբուրեմ (իր ձեռքերը կը պագնէ)

ԳԱՐ.— Չէ ճանըմ, քու ձեռքերդ չէ...

ԷԹԻ.— Հապա որո՞ւն ձեռքերը։

ԳԱՐ.— Իմ ձեռքերս...

ԷԹԻ.— Ձեր ձեռքերը մի, (ինքնիրեն) արդեօք իրաւ է։ Մօտենանք, (բարձր) տիկին կը խնդրեմ, ինծի հետ կատակ կ'ընէք։

ԳԱՐ.— Ձեռքս եթէ չի համբուրես, քեզ կը վռնտեմ։

ԷԹԻ.— Ա՜, ամա՛ն համբուրեմ, համբուրեմ։ (բերանը սրբելով կը մօտենայ)

ԳԱՐ.— (ոտքը գետին զարնելով) չուտ, քեզի կ'ըսեմ, չի համբուրես։ Հիմա թէ ծեծ կ'ուտես և թէ քեզ կը վռնտեմ։

ԷԹԻ.— Համբուրեմ տիկին համբուրեմ. (կը պաճնէ) բամպակի նման ձեռներ. թէ թոմպուլիկ և թէ թոնթոշիկ։

ՏԵՍԻԼ Թ.

ՆՈՅՆԸ ԵՒ ԱՐՄԱՆ

ԱՐՄ.— Արդեօք. ձայնս չը լսեց. (տեսնելով) աս ի՞նչ է, այս ո՞վ է...

ԳԱՐ.— (չըտեսնել կը ձեւացնէ) հա՛... ահաւասիկ ամուսինս։

ԷԹԻ.— Անդամ մըն ալ կարմիր այտերնս...

ԳԱՐ.— Ո՛չ, ո՛չ, մինչեւ հոն եկնելու չեմ արտօներ...

ԷԹԻ.— Մի վշտանաք. ես դարձեալ ձեռքերնիդ կը համբուրեմ (կը համբուրէ)

ԱՐՄ.— (ինքնիրեն) հիմա խելքս պիտի թռցուցնեմ, (բարձր եւ բարկոտ) ի՞նչ է այս տիկին...

ԳԱՐ.— Վա՜յ, դուք էք միւսիւ դօնթ. (խնդալով) կոշկակարս է, ոտքիս չափը պիտի առնէ ատոր համար (ամուսնոյն ֆովը երթալով) կը նախանձի՞ք կոր։

ԱՐՄ.— Ո՛չ, բայց այս սրիկան ապուշը...

ԷԹԻ.— Ինչպէս, ինչպէ՞ս կարծեմ թէ այս մարդը ղիս կ'անպատուէ կոր...

ԳԱՐ.— Դուն լռէ...

ԷԹԻ.— Ի՞նչու համար լռեմ, ասանկ տխմար մէկուն այսպէս պատիւներ ընել միթէ կը վայլէ. զարկ կիս մը կոնակին նետէ դուռնէն դուրս։

ԳԱՐ.— Լռէ՛ ըսինք ա՛...

ԱՐՄ.— Տիկին, ինքզինքնիդ ի՞նչպէս պիտի արդարացնէք.

ԳԱՐ.— Սիրելիս ի՞նչ ընեմ. ինծի մինակ ձգելով երթալնուդ համար, ինծի ժամանց մը ընելու և զուարճանալով ժամանակս անցնելու համար. այս միջո-

ցին դիմեցի։ Ձեզի ասկէ աւելի պատասխան մը չեմ կրնար տալ։ (Կ'երթայ)

ՏԵՍԻԼ Ծ.

ԷԹԻ.— Առիր մի՞ բայլթ, գի՞ւթ... (Կ'երթայ)։

ԱՐՄ.— (օձիքեն բռնելով) Քեզի սրիկայ քեզի, պատիւս բարայի մը ըրիր, միամիտ, անմեղ կին մը գլխէ հանեցիր, հիմա՞ քեզ մեռցնել իմ վզիս պարտքն է։

ԷԹԻ.— Գնա գործիդ պէ մարդ, գնա աչքիս մի երեւար, գնա ուրիշ տեղ մը քեզի համար աղա մը փնտռէ, ձեզի պէս վարնոց ծառաներ գործածելը խելացութիւն չէ ամա, ի՞նչ ըսեմ, ան տիկին գօնթէսին որ ասանկ բաները չէ մոռածած։

ԱՐՄ.— (ինքնիրեն) ա՜յ, այս մարդը ապուշ կը նմանի (բարձր) ըսելէ դուք տիկինին սիրտը դրաւեցիք։ Այնպէս է։

ԷԹԻ.— Ի՞նչ ըսել է, հարկաւ, այս օրս ընէ ըսկսեալ ես այս տանը տէրն եմ, այս տանը աղան եմ, դուն ինչէնի ես հոս էշ մարդ։

ԱՐՄ.— (ինքնիրեն) հասկցուեցաւ, մեր տիկինը այս ապուշին միջոցաւ ինծի խաղ մը խաղալով յանցանքս երեսիս զարկաւ, շատ աղէկ, դուն ալ կեցիր տէ ես ալ քեզի խաղ մը խաղամ սովրիս։

ԷԹԻ.— (ինքնիրեն) իրեն իրեն կը մոլտայ կը կենայ։

ԱՐՄ.— Պարոն, քանի որ տիկինը ձեզի ինձմէ բարձր բռնած է, քիչ մը կեցիր քեզի ըսելիք ունիմ (Կ'երթայ)։

ԷԹԻ.— Այս մարդը ի՞նչ կը մոլտայ պէ, տիկին գօնթէսը քեզի բարձր պիտի բռնէ և այլն...

ԱՐՄ.— (երկու սուր բերելով) սա մէկ հատը դուն առ տեսնենք, երկուքնէս մէկուն կեանքը մէջտեղէն պէտք է վերնայ (մէկը գետին կը նետէ)

ԷԹԻ.— Քուկդ վերնայ էշ մարդ, Տիկին գօնթէսը

քեզ չը սիրեր տէ զիս կը սիրէ եղեր, գուն անոր (ֆէյֆիցեանիբրեես)։

ԱՐՄ.— Շուտ ըրէ, առ սա սուրին մէկը ինքզինքդ պաշտպանէ։

ԷԹԻ.— Դուրս եկ պէ մարդ, դուրս եկ, հիմա ձեռքէս փորձանք մը կ'ելլէ։

ԱՐՄ.— Առ սա սուրը, կ'ըսեմ քեզի, չէնէ ճիշդ սրտիդ պիտի փակցնեմ։

ԷԹԻ.— (փախուստ տալով) կեցիր պէ մարդ կամաց կամաց, աճապարելու ի՞նչ կայ, կեցիր նախ և առաջ ձեզի բան մը հարցնեմ.

ԱՐՄ.— Շուտ ըրէ, զուրցէ.

ԷԹԻ.— Սանկ, այսինքն բան...

ԱՐՄ.— Ի՞նչը, ի՞նչ բան. ի՞նչ է ան։

ԷԹԻ.— Բան... այսինքն ըսել կ'ուզեմ թէ, ձեր տանը փողոցին դուռը ո՞ր կողմն է։

ԱՐՄ.— Ըսել է պիտի փախչիք, կը վախնաք կոր։

ԷԹԻ.— Ո՛չ, ո՛չ, ի՞նչ բանէ վախնամ. (ինքնիրեն) վախնալը մէկ կողմ մնայ, շան պէս կը դողամ կոր, ա՜խ անդամ մը փողոց ելնեմ, եսիս չի նայելով նապաստակի պէս պիտի փախչիմ։

ԱՐՄ.— Մի վախնար բարեկամս մի վախնար, նապաստակս քեզի մնայնել չէ, գիտցած եղիր որ ես այս տանը տէրն եմ, գօնթէսն ալ իմ տիկինս։

ԷԹԻ.— Իրաւ կ'ըսէք (ինքնիրեն) չէնէ ինծի կը խաբէ կոր.

ՖՐԷՏ.— (մեջեղով) միւսիւ գօնթ պարոնին թէյը.

ԷԹԻ.— Հա՛, բեր, բեր, որովհետեւ սիրուս կ'այրի կոր, ամբողջ ջիղերս թունդ եկան։

ԱՐՄ.— Հիմա ժամանակը չէ Ֆրէտէրիք, ետ տար։

ՖՐԷՏ.— Շատ լաւ միւսիւ գօնթ, (կ'երթայ)։

ԷԹԻ.— (ինքնիրեն) գօնթը ինքն է եղեր, մարդը տունին տէրն է եղեր։

29692

ԱՐՄ.— Քանի որ տիկինը ձեր միջոցաւ ինծի խաղ մը խաղաց ես ալ փոխադարձ ձեր միջոցաւ խաղ մը խաղալ կ'ուզեմ անոր։

ԷԹԻ.— Շատ աղէկ միւսիւ գօնթ, ինչպէս որ կ'ուզէք, (ինքնիրեն) մենք ալ ըսես նէ էշը մէշը աղ-ւոր մը քալեցինք մարդուն վրայ։

ԱՐՄ.— Հիմա ինծի մտիկ ըրէ, եթէ խօսքս մտիկ ընելու ըլլաս, ինծի հնազանդիս, քեզի հոս մեր տուն-նը վար կը դնեմ. և մինչեւ վերջը հանգիստ կեանք մը կ'անցնես։

ԷԹԻ.— Այո՛, տիկինն ալ այդպէս զուրցեց.

ԱՐՄ.— Ի՞նչ զուրցեց.

ԷԹԻ.— Ինծի այս տանը մէջ ծառայութիւն մը պիտի տար։

ԱՐՄ.— Շատ աղէկ, շատ աղէկ, հիմա սա սուրը առ նայիմ.

ԷԹԻ.— Ի՞նչպէս, նորէն սուրը։

ԱՐՄ.— Առ կ'ըսեմ քեզի, մէկզմէկու զարնենք։

ԷԹԻ.— (առնելով) շատ աղէկ...

ԱՐՄ.— Սկսինք։

ԷԹԻ.— Ի՞նչ... այսպէս դէմ առ դէմ.

ԱՐՄ.— Այսինքն կատակ է ըրածս.

ԷԹԻ.— Գնա գործդ պէ մարդ ատիկս վայրենու-թիւն է. ես անանկ դէմ առ դէմ եղած կատակներէն չեմ ախորժիր.

ԱՐՄ.— Բա՛յց...

ԷԹԻ.— Բա՛յց, մայց չիկայ... կատակ է ըսելով անդիի աշխարհք դլտորելու ժամանակ չունիմ։

ԱՐՄ.— Անանկ է նէ պարտէզ երթանք, եթէ կը կասկածիս ինէ, սուրերուն երկուքն ալ դուն առ։

ԷԹԻ.— Է՛յ, վերջը ի՞նչ պիտի ըլլայ։

ԱՐՄ.— Դուն պարտէզը սուրերը իրար պիտի զարնես, տիկինն ալ սուրերուն ձայնը լսելով պիտի

կարծէ թէ, ես կը մենամարտիմ կոր, պիտի խաբուի։

ԷԹԻ.— Այդ է նէ՛, բան մը չէ, կ'ընդունիմ. (սուրերը կ'առնէ)

ԱՐՄ.— Օ՛ն, շուտ բրէ միասին եկուր (կ'երթան)։

ՏԵՍԻԼ ԺԱ.

ԳԱՐՕԼԻՆ (միանակ)

ԳԱՐ.— (մտնելով) մարդ մարդասանք չիկայ, խեղճ ապուշը արդեօք ո՞ւր ուարաւ, ո՞վ գիտէ որչա՞փ բարկացած է։ (սուրի ձայն) ա՛հ, այն ինչ ձայներ են, (պատուհան կը վազէ) ա՛հ սուրի ձայներ, ամեն իրարու կը զարնուին. իրարու հետ կը մենամարտին, ա՛հ Աստուած իմ. կեցի՛ր, ան իմ ամուսինս է։ Ա՛հ հիմա կը մարիմ։ (աթոռին վրայ կ'իյնայ կը մարի)

ՏԵՍԻԼ ԺԲ.

ԱՐՄԱՆ. ԷԹԻԷՆ. ԳԱՐՕԼԻՆ

ԱՐՄ.— (մտնելով) Աստուած տար տէ, սա կատակին վերջը առանց փորձանքի անցնէինք.

ԷԹԻ.— (սուրերը իրար զարնելով ներս կը մտնէ) քանի որ միւսիւ դօնթը այսպէս հրամայեց, պէտք է հրամանը գործադրենք, թեւերս բրթաւ զարնուելով. այս մարդը որ կողմ գնաց, մինչեւ երբ զարնելու է. (տիկինը տեսնելով) հասկցուեցաւ, տիկինը արթնցնելու համար է կարծեմ... աւելի խիստ զարնելու է. (իրար կը զարնէ ուժգին)

ԳԱՐ.— (խելքը գլուխը գալով) դուն ես անդութ... ամուսինս մեռուցիր, ի՞նչ ըրիր, ոճրագործ...

ԷԹԻ.— Ի՞նչ, ի՞նչ ըսիք. ես ոճրագործ ի՞նչեր կ'ըսէ...

ԳԱՐ.— (օձիքեն բռնելով չուտ ըսէ, ամուսինս ո՞ւր է. ի՞նչ ըրիր, քեզմէ կը պահանջեմ...

ԷԹԻ.— (լալով) ո՛չ, տիկին, ո՛չ, ես բան մը չըրի, ո՞ւր երթալը չեմ գիտեր, ո՞ւր գտնեմ.

ԱՐՄ.— (սեղեակին դուռը երեւցնելով) Օ՜ տիկին ի՞նչ է ան, ի՞նչ եղաւ, ի՞նչ ունիք...

ԳԱՐ.— Ա՜հ, դուք հոս էք, վիրաւորուած էք...

ԱՐՄ.— Ո՛չ, ի՞նչու համար վիրաւորուիմ...

ԳԱՐ.— Հա՞պա որու հետ զարնուեցար.

ԷԹԻ.— Ես, չէի զարնուեր կոր տիկին.

ԳԱՐ.— Հապա, ի՞նչ կ'ընէիր, ես սուրերու ձայն լսեցի...

ԷԹԻ.— Այո՛, աջ թեւս, ձախ թեւիս հետ. կը վիճէր.

ԳԱՐ.— Ես ալ կարծեցի թէ ամուսնոյս հետ կը մեռնամարտէիք։

ԱՐՄ.— Սիրելիս... ձեր ինծի խաղացած խաղին մէկ ուրիշ տեսակն ալ ես ձեզի խաղացի... ասոնց երկուքն ալ կատակ, ես ձեզի միայնակ ձգել երթալուս զղջացի, և ուրիշ անգամ ձեզի չը վշտացնելու խօսք կուտամ գալով այս տղուն մեր հաշտուելուն բուն պատճառը այս է. ատոր համար խօսք տուի մեր տունը մնալու, ի՞նչ կ'ըսէք տիկին...

ԳԱՐ.— (խնդալով) ես ալ այդպէս խօստացայ... ինծի նայէ լրագիր ծախելովդ քանի՞ բարա կը շահիս կոր... ամիսը քանի ֆրանք...

ԷԹԻ.— (ինքնիրեն) չատ թէ քիչ, զուրցեմ. (բարձր) է՜հ, սանկ 18 ֆրանքի չափ. (ինքնիրեն) քիչ եղաւ (բարձր) 25. ա՛, ո՛չ, ո՛չ, սանկ յիսունի մօտ... և այլն...

ԱՐՄ.— Ամիսը թէ, օրը...

ԷԹԻ.— (ինքնիրեն) օրը մի՞... այս մարդը ինչ կ'ըսէ...

ԳԱՐ.— Ամիսը, քեզի 200 ֆրանքով այս տանը մէջ ծառայութիւն մը տանք նէ գոհ կը մնաս,

ԱՐՄ.— Վերջը գործիդ հետեւիս և աւելի աչքդ բանալու ըլլաս 3-4-5 հարիւր ֆրանքի չափ կը բարձրանայ...

ԷԹԻ.— (ինքնիրեն) Է՛... աս աղէկ, գործիս եկաւ ամիսը 3-4-5 հարիւր ֆրանք։

ՏԵՍԻԼ ԺԳ.

ՆՈՑՆՔ ԵՒ ՖՐԷՏԷՐԻՔ.

ՖՐԷՏ.— (թէյի ափսեով մտնէ) պարոնին թէյը...

ԱՐՄ.— Քիչ մը կեցիր (էթիէնին) Է՛յ, ի՛նչպէս, պայմաններէս գոհ մնացիր...

ԷԹԻ.— Ցետին ծայր գոհ մնացի, մեծապէս շնորհակալ եմ. (գլխարկը կը հանէ ափսէին զարնելով գաւաթ եւայլն գեսին կը ձգէ) Վա՛յ... (ինքնիրեն) տեսար մի՞ հիմա կերած ապուրնիս. մէկ գաւաթ թէյով խայտառակ եղանք դնաց...

ԱՐՄ. (ցած Գարոլինին) քիչ մը սա ապուշին հետ կատակ ընենք. (բարձր) ինծի նայէ, աս տանը մէջ կոտրուածներուն հաշիւը ամսականէն վար կը զարնենք։

ԷԹԻ.— (Ինքնիրին) աս հաշուով մեր ամսականը պիտի աւելնայ, (ծունկի զալով բարձր) ամսան միւսի գոնթ, ծառայի մը առաջին յանցանքը ներե՛ի կ'ըլլայ կարծեմ թէ, ուրիշ անգամներ աւելի աչքբացութիւն ընել կը խոստանամ.

ԳԱՐ.— Շատ աղէկ, այս անգամ ներեցինք. ուրիշ անգամ ուշադրութիւն ըրէ հա՛...

ԱՐՄ.— այս ծառային հետ գնա պէտք եղածը ան քեզի կը ցուցնէ... (Գարոլին եւ Արման կ'երթան)

ԷԹԻ.— Է՛հ, առջիս ինկիր նայինք։

ՖՐԷՏ.— Հրամմեցէք պարոն, այս կողմէն...

ԷԹԻ.— Աղէկ ա՛, ինչ ըսելով մինչև կռնակս մտած էիր...

ՖՐԻՏ.— Բայց դուք...

ԷԹԻ.— Բա՛յց մա՛յց չիկայ, ես ուսերուս վրայ աչք չունիմ եա՛... ըսել է դուն ծառայելուն կերպը չես գիտեր. սա ափսէն ինծի տուր տէ, տեսիր թէյը ինչպէս միւսիւ գօնթին կը հրամցնեն (կ'առնէ ափսէն եւ իբր թէ կը հրամցնէ) հրամմեցէք տէր իմ. (ափսէն ձեռքէն իյնալով) վա՛յ...

ՖՐԻՏ.— Հիմա սա եղաւ, դուն սասը հաւնեցար...

ԷԹԻ.— Հասկցուեցաւ ես լրագիր ծախելէն զատ և ոչ մէկ բանի օգտակար պիտի կրնամ ըլլալ. թուղթերը ձեռքէս իյնալու ըլլան չեն կոտրիր մենք նորէն մեր գործին հետեւինք, ինծի նայէ բարեկամս, ներողութիւն սա փողոցին դուռը ինծի ցոյց տուէք։

ՖՐԻՏ.— Անաւասիկ այս կողմէն, չիբ չիտակ գնա...

ԷԹԻ.— Շնորհակալ եմ, մնաք բարով... բարի գիշեր... (կ'երթայ)



ՀԱՅՍՊ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ № 2
ԱԿԱԴԵՄԻԱ

ՎՐԹԱՆԷՍ ՓԱՓԱԶԵԱՆ

ԳԱՌՆՈՒԿԸ

ՄԱՆԿԱԿԱՆ ԹԱՏԵՐԱԽԱՂ ՄԷԿ ԱՐԱՐՈՎ

[ՇԻՆՈՒԱԾ ԴՊՐՈՑՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ]

Հրատարակիչ՝ ՅԱԿՈԲ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ
Պատրաստ Ա.լի, Ռէհիա Է.Ֆ. իսան

Ս. ՊՈԼՍՈՅ
Տպարան «ԷՄԻԼԻԱ»
1930

II
A 29627

ԹԱՏԵՐԳՈՒԹԻՒՆՆԵՐ

		Ղրս.
Ակնցի Հաճի Աղան	Յ. Յ. Ամիրեանց	40
Արչին Մալ Ալան		15
» » » Հայատառ Թուրքերէն		25
Անձնուէր Ընկերը		50
Էպլէպիճի		30
Շատախոս Սափրիչը		15
Ասիացի Սափրիչը	Յ Պապէսեան	10
Ամերիկանայ Փեսացուն կամ Տայը Կարապետ		25
Բարեկենդանի Անկուտիները		15
Դղումի Վաճառականը		15
Երանոս Աղբար	Տ. Փափազեան	25
Երկու Խուլեր	Մոլիէր	15
Թիք Թաք		10
Կրլ Սքաուլթ կամ Մատս Մէջն է	Ե. Թոլաեան	50
Սատանայ		10
Սիքլոբ		10
Գողը	Տ. Միրոյ	15
Հնարամիտ Վարձակալը		10
48 Օխանոց գլխու փորձանքը		20
Վիրի ճաշարանին ոպառաւորը		15
Գործարանին Երկրաչափը		15
70նոց փեսացուն		10
Գառնուկը մանկական թատ.		15
Խէչոյին թուղը		10

Յ. ԱԲՐԱՀԱՄԵԱՆ Գրատունը կը հայթայթէ Դրպրոցական, Վիպական, Թատերական, Պատմական, Բանաստեղծական ամէն տեսակ Հայերէն գիրքեր եւայլն, եւայլն։

Հասցէ՝

ՅԱԿՈԲ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ

Կ. Պոլիս, Պալը Ալի, Բէշիր էֆ. խան

ԳԻՆ 15 ՂՐՇ

159

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
220029627

A II 29627